ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 10 ապրիլի 2019թ.

2019 թվականի ապրիլի 10-ին, ժամը 12:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին» որոշման նախագծի թեմայով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող, համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին:

համայքնի ավագանու որոշման նախագծի քննարկում:

Լ.Պողոսյանը ներկայացրեց Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքը: Գույքահարկի գծով վճարումներ կատարվել են 153.6%-ով, հողի հարկի գծով՝ 138.2%-ով, տեղական տուրքերը՝ 136.3 % -ով: Թերակատարվել է վարձակալական հողերի վարձավճարների մասը: Թերակատարում է առաջացել նաև Բյուրեղավանի << Արև>> մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի և <<Բյուրեղավանի Շառլ Ազնավուր անվան արվեսի դպրոցի>> կողմից մատուցվող ծառայությունների դիմաց տեղական վճարների գծով, ինչը կապված է ոչ ժամանակին մուծումների հետ: Որոշվեց առաջարկել ՀՈԱԿ-ների տնօրեններին՝ հետևողական լինելու վարձավճարները ժամանակին և պարտաճանաչ մուծելու հարցում:

Գյուղական բնակավայրերում աղբահանության վճարների հավաքագրման գծով ևս խնդիրներ կան: Աղբը ժամանակին հավաքվում է, սակայն բնակիչները աղբահանության վճարները կամ չեն մուծում, կամ մասամբ են մուծում: Անհարժեշտ է բնակիչների հետ բացատրական աշխատանքներ տանել:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 51.6 %, տնտեսական հարաբերությունների գծով՝ 85.8 %, շրջակա միջավայրի գծով՝ 40.8%, բնակարանային շինարարության գծով՝ 21.5%, հանգստի, սպորտի և մշակույթի գծով՝ 10.3 %, կրթության գծով՝ 66.3% և սոցիալական ապահովություն՝ 59.1 % :

Կից ներկայացվում է հաշվետվությունը:

Որոշվեց՝

հավանություն տալ Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան

Բյուրեղավան համայնքի բյուջեի 2019թ. եկամուտների
կատարողականը առ 01.04.2019թ. դրությամբ

N	Եկամուտի անվանումը	2019 թվականի				2019 թվականի մարտ			
		պլան	փաստ	կատ. %	շեղում	պլան	փաստ	կատ. %	շեղում
1	Եկամուտները, այդ թվում	304659.2	73554.7	24.1	-231104.5	73909.0	73554.7	99.5	-354.3
2	Հարկեր և տուրքեր , այդ թվում	40974.0	11131.9	27.2	-29842.1	7322.8	11131.9	152.0	3809.1
3	Գույքային հարկեր, այդ թվում	38657.2	10212.2	26.4	-28445.0	6647.8	10212.2	153.6	3564.4
4	Գույքահարկ շենքերի և շինությունների, փոխ.միջոցների համար	30430.2	8988.8	29.5	-21441.4	5762.8	8988.8	156.0	3226.0
5	Հողի հարկ	8227.0	1223.4	14.9	-7003.6	885.0	1223.4	138.2	338.4
6	Տեղական տուրքեր, որից	2316.8	919.7	39.7	-1307.1	675.0	919.7	136.3	277.7
16	Դոտացիա	210081.8	52520.5	25.0	-157561.3	52520.5	52520.5	100.0	0.0
17	Սուբվենցիա	2567.1	428.7	16.7	-2138.4	428.7	428.7	100.0	0.0
18	Այլ եկամուտներ, որից	51036.3	9473.6	18.6	-41562.7	13637.0	9473.6	69.5	-4163.4
19	Հողի վարձակալությունից վճար	7250.3	857.7	11.8	-6392.6	1853.0	857.7	46.3	-995.3
20	Տեղական վճարներ	150.0	40.0	26.7	-110.0	50.0	40.0	80.0	-10.0
21	Մանկապարտեզի վճար	11568.0	2274.5	19.7	-9293.5	2880.0	2274.5	79.0	-605.5
22	Արվեստի դպրոցի վճար	*7848.0*	1829.0	23.3	-6019.0	2592.0	1829.0	70.6	-763.0
23	Աղբահանության վճար	19450.0	4105.4	21.1	-15344.6	4862.0	4105.4	84.4	-756.6
24	Համայնքի վարչ. տարածք. ինքն. կառ. շենք. և շինություն. օրինակ. համար վճար	3000.0	0.0	0.0	-3000.0	1000.0	0.0	0.0	-1000.0
25	Օրենքով և իրավ.այլ ակտերով սահման. այլ եկամուտներ	1570.0	357.0	22.7	-1213.0	300.0	357.0	119.0	57.0
26	Վարչական տուգանք	200.0	10.0	5.0	-190.0	100.0	10.0	10.0	-90.0
27	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	18000.0	607.2	3.4	-17392.8	18000.0	607.2	3.4	-17392.8
28	Տարեսկզբի ազատ մնացորդ	41804.4	41804.4	100.0	0.0	41804.4	41804.4	100.0	0.0
29	Ընդամենը եկամուտներ	364463.6	115966.3	31.8	-248497.3	133713.4	115966.3	86.7	-17747.1
30	Սեփական եկամուտներ	92010.3	20605.5	22.4	-71404.8	20959.8	20605.5	98.3	-354.3

Ընդամենը ծախսեր					109425.0	40212.7	36.7	69312.3
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ					24272.0	12536.0	51.6	-11736.0
Պաշտպանություն					0.0	0.0	0.0	0.0
Տնտեսական հարաբերություններ					1883.0	1614.8	85.8	-268.2
Շրջակա միջավայր					22000.0	8984.6	40.8	-13015.4
Բնակարանային շինարարություն					2700.0	581.3	21.5	-2118.7
Հանգստի, սպորտ և մշակույթ					28335.0	2915.3	10.3	-25419.7
Առողջապահություն					9600.0	0.0	0.0	-9600.0
Կրթություն					19350.0	12820.7	66.3	-6529.3
Սոցիալակն ապահովություն					1285.0	760.0	59.1	-525.0
Պահուստային ֆոնդ					0.0	0.0	0.0	0.0